ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 04.05.2020թ.),

ՀՀ պետական վերահսկողության ծառայության ներկայացուցիչ

Մ. Սահակյանի (լիազորագիր, տրված՝ 13.05.2020թ.),

քննելով «ԵՊՀ» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Մրցույթ) շրջանակներում «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից 07.05.2020թ. ներկայացված (08.05.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/47 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 81.064.536 ՀՀ դրամ գնային առաջարկ /ընդհանուր գին/:

Մասնավորապես, «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է բողոքին).

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	«ԵՊՀ բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերում	61.003.368	6.550.411	13.510.756	81.064.536

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 23.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է բողոքին) 1.3 կետի համաձայն, արձանագրել է, որ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկի մեջ ներկայացված ինքնարժեքի, շահույթի, ԱԱՀ-ի հանրագումարը հավասար չէ ներկայացված գնային առաջարկին՝ ոչ թվային, ոչ տառերով գրված տարբերակներում:

Եվ նույն արձանագրության 1.4 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը եղել է ամենացածրը, իսկ տվյալ մրցույթով հաղթող մասնակիցը առաջարկել է մոտ 12 մլն. ՀՀ դրամ ավելի բարձր գնային առաջարկ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված N 526-Ն որոշման /այսուհետև՝ Կարգ/ 32-րդ կետի 2-րդ մասով սահմանվում է

- 2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

- Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

- Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

- Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

- ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

- բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

- գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթին՝ ներկայացնելով 81.064.536 ՀՀ դրամ գնային առաջարկ /ընդհանուր գին/: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ (կցվում է բողոքին) ՍՊԸ-ի հայտը մերժել է այն հիմքով, որ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկի մեջ ներկայացված ինքնարժեքի, շահույթի, ԱԱՀ-ի հանրագումարը հավասար չէ ներկայացված գնային առաջարկին՝ ոչ թվային, ոչ տառերով գրված տարբերակներում:

Ըստ երույթի, խնդիրը կայանում է մասնակցի կողմից հաշվարկված ԱԱՀ գումարի մեջ, քանի որ, եթե հաշվարկվում է ԱԱՀ, ապա սովորական հաշվարկման դեպքում ստացվում է 13.510.756 դրամ գումար, իսկ եթե հաշվիչ մեքենայի վրա դրվում է գործիք՝ ցույց տալ տասնորդական թվերը, ապա ԱԱՀ գումարը ստացվում է 13.510.755, 8 ՀՀ դրամ

գումար: Մինչդեռ բողոքաբերի կողմից ԱԱՀ գումարի սյունակում նշված է 13.510.756 դրամ գումարը՝ առանց 2 տասնորդականի, այսինքն առանց 20 լումայի:

Տեսականորեն կարելի է պատկերացնել, որ գնահատող հանձնաժողովը նկատի ունենալով այս 20 լումայի խնդիրը, որի արդյունքում ընդհանուր գնի մեջ արձանագրվել է մեկ դրամի տարբերություն, արձանագրել է, որ սխալ է հաշվարկվել գնային առաջարկը:

Բացի այդ, արդյոք հիմնավոր է 20 լումա տարբերություն տվող հաշվարկի դեպքում մերժել մասնակցի գնային առաջակը, եթե արդյունքում տվյալ մրցույթով հաղթող է ճանաչվում 12 մլն. ՀՀ դրամ ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը, և դրանով խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքները:

Մասնավորապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Մինչդեռ գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, ցանկանում ենք հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու

հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի կողմից «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը անբավարար գնահատելու որոշումը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Ելնելով վերոշարադրյալ նորմի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Հանձնաժողովը «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս, հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված որոշմամբ խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Արդյունքում պատվիրատուն ստիպված է լինելու նշված մրցույթի արդյունքում պայմանագիր կնքել ավելի, քան 12 մլն. ՀՀ դրամ բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ, ինչը, մեր կարծիքով, էական վնաս կպատճառի նրա բյուջեին՝ ներկայիս ծանր տնտեսական պայմաններում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ պետական վերահսկողության ծառայության ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից 11.05.2020թ. ներկայացված միջնորդության հիման վրա՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2020/47 բողոքի շրջանակներում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը, ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ուսումնասիրելով առկա նյութերը՝ գտնում է, որ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը՝ տառերով և թվերով, չի համապատասխանում գնային առաջարկի օրինակելի ձևին, միաժամանակ հայտնելով, որ Ընթացակարգի հրավերի՝ հայտը ներկայացնելու կարգով հստակ նախատեսված է, թե որ դեպքերում գնային առաջարկը ենթակա չէ մերժման, ուստի Պատվիրատուի գործողություններն իրավաչափ են:

3. «ԵՊՀ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ԵՊՀ» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 23.04.2020թ.: Հայտեր են ներկայացրել թվով 5 ընկերություններ՝ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊ, «Ագաթ 777» ՍՊ, «ԳՈՌ» ՍՊ, «Ինտերեվրոս Արգոս» ՍՊ և «Բազալտշին» ՍՊ ընկերությունները: Ընկերությունների կողմից ներկայացված հայտային փաթեթները գնահատվել են մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից և 5 ընկերություններից 3-ի հայտերը մերժվել են: ԵՊՀ գնահատող հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, այդ թվում՝ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ հայտը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ընկերության ներկայացրած գնային առաջարկը ամենացածրն էր և ԵՊՀ միջոցներից տնտեսվում էր ավելի քան 26 միլիոն ՀՀ դրամ՝ նախահաշվային գնի հետ համեմատած:

«Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ հայտը մերժվել է բացառապես նրա գնային առաջարկում տեղ գտած թվաբանական սխալի պատճառով (համաձայն 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման 32 կետի, 2) ենթակետի պահանջների), որը բողոքաբերը ներկայացրել է բողոքը քննող անձին՝ չներկայացնելով իր գնային առաջարկում նշված թվային արժեքների տառերով գրված մեծությունները,

«Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ հայտով ներկայացված գնային առաջարկում գրված էին հետևյալ գումարները՝ ինքնարժեք 61 003 368 (վաթսունմեկ միլիոն երեք հազար երեք հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ, Շահույթ՝ 6 550 411 (վեց միլիոն հինգ հարյուր հիսուն հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 13 510 756 տասներեք միլիոն հինգ հարյուր տաս հազար յոթ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ և Ընդհանուր գինը՝ 81 064 536 (ութսունմեկ միլիոն վաթսունչորս հազար հինգ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ:

Այս թվերի բազմակողմանի ստուգումների արդյունքում ակնհայտ էր, որ գնային առաջարկում կա հանրահաշվական սխալ՝ մեկ ՀՀ դրամի չափով (և թվային և տառային արտահայտություններով): Մրցույթին հայտեր ներկայացրած մասնակիցներից ևս 2-ի

գնային առաջարկներում տեղ էին գտել անճշտություններ, ուստի այդ մասնակիցների հայտերը նույնպես մերժվել են նույն հիմքով:

- Նշեմ, որ գնահատող հանձնաժողովը չի առաջնորդվել այն ենթադրություններով՝ թե ինչ կարող էր ի նկատի ունենալ մասնակիցը, քանի որ գնումները անցկացնելու կարգը հստակ սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկում տեղ գտած անհամապատասխանությունները ենթակա չեն շտկման: Համաձայն նույն կարգի, եթե գնային առաջարկում լրացված գումարներից որևէ մեկը վերջանար ստորակետով՝ այսինքն՝ անհրաժեշտություն առաջանար կլորացում կատարելու, ապա դա պետք է կատարվեր համաձայն նույն կարգի պահանջների:

Բողոքաբերի ներկայացրած պարզաբանումներում նշված է, որ ըստ երևույթին սխալ է հաշվարկված գնային առաջարկի ԱԱՀ արժեքը, որտեղ կա 0.2 ՀՀ դրամի տարբերություն: Այնուհետև նշվում է, որ հայտը մերժվել է այդ 20 լուման հաշվի չառնելու պատճառով:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից ստացած գնային առաջարկում նշված լրացված թվերը գումարել է և որևէ ձևով չի հանգել մասնակցի կողմից նշված վերջնագումարին: Մասնակցի կողմից ԱԱՀ տողում 13 510 755.8 ՀՀ դրամ լրացնելու դեպքում, եթե կլորացում չարվեր, ապա ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ տողերի վերջնագումարը կկազմեր 81 064 534.8 ՀՀ դրամ և տարբերությունը կլինի ոչ թե 20 լումա այլ 1.2 ՀՀ դրամ, ինչը կլորացնելու դեպքում մասնակիցը կարող էր որպես վերջնարդյունք ստանալ 81 064 535 ՀՀ դրամ:

ԵՊՀ մրցույթի գնահատող հանձնաժողովի կարծիքով տեղի է ունեցել հանրահաշվային սխալ և գնային առաջարկը սխալ է լրացվել:

Միաժամանակ հայտնում եմ Ձեզ, որ սույն ընկերությունը դիմել էր նաև ՀՀ ֆինանսների նախարարին և ներկայացրել էր մրցույթին ներկայացված գնային առաջարկը և արդեն շտկված ծավալաթերթ, որը ԵՊՀ գնահատող հանձնաժողովը մրցույթային փաթեթով չէր ստացել:

ՀՀ ֆինանսաների նախարարը՝ հղում անելով արդեն շտկված ծավալաթերթին, տվել էր կարծիք, համաձայն որի հայտը ենթակա չէ մերժման: ԵՊՀ գնահատող հանձնաժողովը քննարկել է այդ դիրքորոշումը և այդ մասով տվել է պարզաբանում առ այն, որ ՀՀ ֆինանսների նախարարին ներկայացված ծավալաթերթը ԵՊՀ մրցույթի գնահատող հանձաժողովը չի ստացել, այն կազմված է մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետից հետո /համաձայն էլեկտրոնային ստորագրության ամսաթվի/, իսկ

հայտը մերժվել է միայն գնային առաջարկում տեղ գտած անճշտության պատճառով, ուստի մասնակցի փաթեթով ԵՊՀ-ին ուղարկած ծավալաթերթի համապատասխանության հարց չի քննարկվել /ընդ որում այդ «շտկված» ծավալաթերթում ևս առկա են հանրահաշվական սխալներ/:

Անկախ այն հանգամանքից, որ բողոքաբերը Ձեզ չի ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարի կարծիքը, սակայն քանի որ ԵՊՀ շահերից է բխում և՛ գնումների մասին օրենքին համապատասխան ընթացակարգեր անցկացնելը և՛ այդ ընթացակարգերի արդյունքում օրենքին համապատասխան հնարավորինս մատչելի գներով աշխատանքների ձեռքբերումը, ուստի մրցութային գործընթացին առնչվող մնացած փաստաթղթերի հետ միասին Ձեզ ենք ներկայացնում նաև ՀՀ ֆինանսների նախարարի անունից էլեկտրոնային փոստով ԵՊՀ ուղարկված կարծիքը այս գործընթացի վերաբերյալ և ԵՊՀ պատասխանը ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***13.03.2020թ.***:

2. «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***13.03.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի 07.05.2020թ. ներկայացրած բողոքը, «ԵՊՀ» հիմնադրամի գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

3) **գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը**: ...

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

2) հրավերի տեքստը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.05.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/6795-2020 գրությամբ դիմել է «ԵՊՀ» հիմնադրամին՝ խնդրելով տրամադրել «ԵՊՀ» հիմնադրամի կողմից կազմակերպված ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով մրցույթի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «ԵՊՀ» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 11.05.2020թ. թիվ 01/454-20 գրությամբ տրամադրել է պահանջվող փաստաթուղթը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ գնումների պլանը, ինչպես նաև Մրցույթի հայտարարությունը և հրավերը, տեղեկագրում հրապարակվել են ***13.03.2020թ.***, այսինքն՝ նույն օրը, մինչդեռ վերոհիշյալ նորմերից բխում է, որ **պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից, հետևաբար՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը գնումների պլանը հրապարակելու օրը, այն է՝ 13.03.2020թ., դեռևս օժտված չի եղել գնման հայտը հաստատելու իրավասությամբ:**

Ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը իրավասու չէր գնման պահանջի ծագման օրը կազմել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովը, կազմավորվելու արդյունքում, Կարգի 31-րդ կետի համաձայն՝ իրավասու կլիներ հաստատելու գնումների հայտարարության և հրավերի տեքստը, իսկ գնումների համակարգողը իրավասու չէր իրականացնելու Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ, 21-րդ և 31-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Մրցույթը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մրցույթն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժելու մասին որոշման իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից 07.05.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

2. Պարտավորեցնել Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով բաց մրցույթը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ